




THE
DICKRIS PUBLISHING CO.
628 Third Avenue,
NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՒՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՁԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՏՐԱՒ, ԹԻՒ 10

ՆՈՐ ԵՈՐԲ, ՅՈՒՆՎԱՐ 15, 1898

ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ԱՅՍ ԵՐԵՎԱՆԻ ԶԱՆԴԵԱԸ

Մարդարէ մ'ըլլաւ հարկ չէ գու-
շակերու համար թէ Հայաստանայ
Եկե. Հողաբարձութեան տալիք այս
հանգէն ամեն տեսակէտով արդիւ-
նաւոր ու փառաւոր պիտի ըլլայ այս
երկրայ. պատրաստուած հարուստ յայ-
տադիրն և այլ կարգադրութիւններն
աներկրայելի ապացոյցներ են այսպի-
սի գուշակութիւն մը արդարացնելու
համար, "որը իր ձեռնդէն յայտնի է"
կրնեն:

Հանդէսն պիտի սկսի ժամը 8ին
Ընթացիկ Բայթ Հօլ անուանի ժողո-
վարական մէջ, 29րդ Փողոց, Մատի-
սըն Ա. Պիլի: Մուտքը ճիւղ պիտի ըլլայ,
խակ "Հէթ չէթ" կըր 25 սէնթ միայն:
Այս ժողովարարէն մէջ կան 20
օժեկաններ, որոց 19ր յարգիրո մա-
մուլ գոսցած պահուն, վաճառուած
են հետեւեալ աղբայնոց:

- Թիւ 1 Տէր Վահրամ Բահանայ
- 3 Տիկին Կ. Կիւլպէնկեան
- 5 Տիար և Տիկին Յ. Ալէօն
- 7 Տիար և Տիկին Յ. Պ. Եարտըմ և
Տիար Արմէն Եարտըմ
- 9 Տիկին Ա. Ս. Ս. և Տիկին Փ. Ա. յ-
վատ և Տիար և Տիկին Ա. Բիթապեան
- 11 Տիկին Երզնէական և Տիար
Երզնէական
- 13 Տիկին Շիւմանեան և Տիար Ա.
Շիւմանեան
- 15 Տիար և Տիկին Ս. Թէլֆեան
- 17 Տիար Բարսեղեօզեան և Տիար
Արսէնեան
- 19 Վարչութիւն Տիգրիսի
- 2 Տիկին Տըթ. Կոստիկեան
- 4 Տիար և Տիկին Ս. Մինաս և ան
- 6 Տըթ. և Տիկին Մ. Տատրեան
- 8 Տիար և Տիկին Պ. Յակոբեան և
Տիար և Տիկին Գ. Սիւնան
- 10 Տ. և Տիկին Յ. Ս. Թավչանեան
- 12 Տ. և Տիկին Տ. Կ. Բէլէկեան
- 14 Տիար և Տիկին Յ. Տիօնեան
- 16 Տիար և Տիկին Հիւրմուզ
- 18 Տիար Տօնեան Եղբարք
- 20 Տիար և Տիկին Գոսայեան

Այս օժեկաններէ գոյացած եկու-
մուտքը կը սուրի թէ հանդիսին բոլոր
ծախքերը պիտի կրնան գոցել, անանկ
որ աճուրդով վաճառուելիք նուէրնե-
րէ և այլ աղբիւրներէ գոյացած բոլոր
եկամուտն պիտի յատկանայ բուն
նպատակին—յօգուտ եկեղեցոյ:

Կը լսենք արժանահաստ աղբիւր-
ներէ թէ Հողաբարձութիւնն ցարդ
ընդունած է 100 կտորէ աւելի զանա-
զան նուէրներ, և նոյնչափ ալ կ'ակըն-
կալէ ստանալ այս երեկոյ՝ հանդիսի
բացումէն առաջ: Այս նուէրներու
մէջ կան շատ մը արժէքաւոր իրեր,
որոց կատարեալ ցանկն ու նուիրաւը-
ւաց անուններն պիտի հրատարակենք
յաջորդ թիւով: Ի մէջ այլոց աւելորդ
չենք սեպեր յիշել Ա. Երկանեանի յը-

ւէրն, որ ընտիր իւղաներկ մ'է. և կը
ըսուի թէ ազգային հանձարեղ նկարչի
մի գլուխ գործոցը կրնայ համարուի:
Ժողովարարէի վարի յարկին մէջ
դիւրամատչելի գներով պիտի վաճառ-
ուին գովազուցիչ ըմպելիքներ, պող-
պազակ, պտուղ, ծաղիկ և այլ շատ
մը բաներ:

Ուրիշ մանրամասնութիւններ յա-
ջորդ թիւին թողով կը բաւականա-
նամբ այժմ ըսել թէ ամեն Հայ ան-
հատ, առանց ո' և է խտրութեան կամ
նկատու մի, պարտաւոր է ներթափս
ու բարոյապէս օգնել այս ձեռնարկին
որոյ արդիւնքը պիտի յատկանայ այն-
պիսի նպատակի մը զոր ոչ մի Հայ կամ
ո' և է յարանուանութեան պատկանող
Բրիտանեայ կրնայ վիճարանութեան
ենթարկել:

Յառաջիկայ շաբթու տեղի ունեն
նալիք նոր Տարուայ և Մինդեան տօ-
նախմբութեան մասին յաջորդիւ:

ՆՈՐ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ Մ Ը
ՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՍՍԻՆ

Անցեալ Կիրակի օր Ուէսթ Հոպո-
քընի մէջ տեղւոյն Յանձնախումբը
ընդհանուր ժողով մը ունեցաւ ի
Պէրնարտ Հօլ, ինչպէս որ ծանուց-
ուած էր ժամանակին, ուր թէ և
մեծ բազմութիւն մը ներկայ չէր,
բայց ոսկայն աղէկ սկզբնաւորութիւն
մը եղաւ, և սկսիլը գործին կէսը կը
նշանակէ արդէն:

Այդ ժողովին հրահրեալ էին խօ-
սիլ Տըթ. Գարեգին Սիւնի և Տ. Էկին
եան: Տըթ. Սիւնի հակիրճ կերպիւ
բացատրեց եկեղեցիին պէտքը, և
պարզ խօսքերով ցոյց տուաւ ժողո-
վրդին այն պարտականութիւնն որ
այդ մասին կը ծանրանար Հայրոց
մասին: Տ. Էկինեան նմանապէս խօ-
սեցաւ միևնոյն նիւթին վրայ:

Տ. Մ. Չարլաֆճեան, ժողովոյն
ատենապետն, հրահրեց Յանձնա-
խումբին գանձապետը, զՏ. Կիւլեան
մի քանի խօսք ըսել ու տեղե-
կութիւններ հաղորդել ժողովոյն ի-
րաց ներկայ վիճակի մասին: Պ. Կիւլ-
եանի տուած տեղեկութիւններն
շատ գոհացուցիչ էին. մանաւանդ
վերջի մասը՝ որով հանգանակութիւնն
սկսեցաւ: Պ. Կիւլեան, իր և իր
եղբարց կողմէ, 50 տօլարի չէք մը
գրաւ սեղանին վրայ 50 նուիրատու-
սի փոխարէն: Այդ օր այդ փոքրա-
թիւ բացմութեան մէջ հանգանակ-
ուեցաւ 300 տօլար՝ որոյ պատճառով
ցուցանի. որ յանձնուած է մեզ հրա-
տարակութեան համար, մաս առ մաս
պիտի երևի Տիգրիսի մէջ յառաջի-
կայ թղէն սկսեալ:

ՆԱՄԱԿ ՊՈՒՍԵՆ

Կ. Պօլիս, Դեկտ. 15, 97.
Բանի մ'օրէ իվեր Օրմանեան Ս.
Պատրիարքը տենդոտ գործունէու-
թեան մը մէջ է. գիշեր ցերեկ կ'աշ-
խատի. ամենակենսական գործեր կը-
տնօրինէ. իբրև օրինակ ձեզ գրեմ տե-
սած մեծ գործերէն հատ մը, միւս-
ներն ալ դուք հետեցուցէք... Եո-
րին Ամենապատուութիւնը 300 օխաէն
աւելի բազմատեսակ շաքարիչէններ
գնեց անցեալ շաբթու համարաւոր
Հաճի Պէթրէն և... յասուկ պաշտօն-
եայներու միջոցաւ բաժնեց Կ. Պօլսոյ
նախակրթարաններու երկսեռ սկոլի-
ներուն. և մամուլի էջերուն մէջ ալ
կէս պաշտօնական յայտարարութիւ-
նով մը ծանուցուեցաւ այս Պատրիար-
քական բարերարութիւնը: Բայց ինչի-
րը հոն է որ, կ'ըսեն թէ Սուլթանը
շատ նեղացած է կարգալով թուրք
լրագիր մը, մէջ ալ այս յայտարարու-
թեանէն օրինակ մը. որովհետեւ... Հա-
միզը կը պնդէ թէ իւր Սուլթանն
նախանգանձին դրամովն է որ Հաճի
Պէթրէն Պատրիարքին ծախած է 300
օխա շաքարիչէններ:

Սրբազան, Սրբազան, հազարա-
ւոր անօթի, մերկ, սմբած, անտէր
որբեր կան Հայաստանի մէջ, որոնք ոչ
"լոխու մի" ախր կը քաշեն, և ոչ ալ կը-
լոր շաքարին. պատառ մը չոր հաց
կ'ուզեն ստնք, կտոր մը լաթ ստուած
մարմիննին գոցելու համար:

Ամեն. Ալէքսանտր Տ. Գրիգորիս
Արքեպիսկոպոսը երէկ կ'ըսէ "չախ" մը
լսեց Եպարզոսէն: Ազգէն ընտրուած
Կիւլիկոյ տան Կաթողիկոսն՝ համբե-
րութիւնը հատնելով, երէկ կ'աննէ կը
քալէ Բ. դուռը, Եպարզոսի ներկայա-
նալով՝ կուզէ իրեն ըսել թէ մինչև
ե՞ր պիտի թախախ Կ. Պօլսոյ մէջ,
մինչդեռ ազգը իրեն տուած է Կաթո-
ղիկոսութեան մեծ պաշտօնը: Սուլ-
թանի ստուերը, փոխանակ ո' և է պա-
տասխան տալու, խոժոռ դէմքով մը
կը պօսայ Կաթողիկոսի երեսին թէ
եթէ ուրիշ անգամ այս ինչորով հա-
մարձակի Դուռը գալու, կատաւա-
րութիւնը գինքը պիտի դրկէ կամ
Երուսաղէմ և կամ ուրիշ վանք մը
աքսոր: Ալէքսանտր Սրբազանը առա-
ջին տեղը երթալու համամիտ է,— կը
ներէք, Սրբազան Հայր, ամեն Երու-
սաղէմ աքսորուող վերջէն անպատ-
ճառ Կաթողիկոս շ'ըլլար. դուք գի-
տէք, լաւ խորհեցէք:

Ահա հատ մըն ալ. դարձեալ եր-
երկա՛ր, ամէններով լեցուն Պատրի-
արքական Կոնդակ մը որ, ամբողջ
եկեղեցիները կարգացուեցաւ: Օր-
մանեան Սրբազանը նորէն կը յորդորէ
ժողովուրդը հաւատարմութեան, ուղ
ղութեան ճամբուն մէջ: Ուրիշ ճար
չըկայ այս կոնդակներէն ազատելու

համար, և թէ ոչ Մայրաքաղաքիս
վարդապետները և տէրտերները օր մը
խօսք մէկ ընեն ու որոշեն... չը կար-
գալ զանանք. ինչո՞ւ Պօլսոյ ալ մէջ
գործադուլներ չի պատահին. և թէ
Տէրտէրները ամեն մէկ կոնդակի
վերջական գին մը — մէկ ոսկի ըսենք
— որոշեն, ապահովապէս տարին կո-
կիկ գումար մը գէթ կը լեցուի իրենց
քսակը:

Տասնեան Յարութիւն Փաշան յա-
տուկ նամակով մը հրաւիրեց Պատրի-
արքը իւր Պէթրէնի ապարանքը,
շատ կարեւոր խնդիրներու վրայ խոր-
հրդակցելու համար... Կ'երևի հաճի
Պէթրէն շաքարիչէններու գինը բարձ-
րացուցած է: ԱՐԱՄ.

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն

Պոսթըն, Յունվ. 6

Նախորդ Դեկտ. 25ի կիրակի օրը
քաղաքիս մէջ գումարուեցաւ Ազգ.
ընդհանուր ժողով մը, որոյ արդիւնքը
պարտ կը համարինք ի պաշտօնէ
հաղորդել ձեզ ի հրատարակութիւն:
Ժողովին առջև երկու տեղական կա-
րեւոր խնդիրներ կային առկա ինա-
ցած. առաջինն էր վերընտրութիւն
քաղաքիս և շրջակայից Հիվիւ Արժ.
Տ. Պաղ վարդապետին. երկրորդը՝
վերականգնութիւն Ազգային Հոգա-
րարձութեան:


Ժողովը, յետ օրինական գործո-
ղութեան, նախ ընդհանուր ներկայից
մեծամասնութեամբ իր հոգեւոր Հո-
վիւն վերընտրեց միամեայ շրջանի
մը համար նախորդ Նոյեմ. մէկէն
հաշուելով:

Յետոյ Հողաբարձութեան ընտ-
րութիւն կատարուելով անգամ ընտ-
րուեցան Տիարք Ա. Թուխանեան, Կ.
Փափաղեան, Մ. Ղուկասեան, Գ. Գա-
րախիւլեան, Մ. Թուխանեան, Դ. Ղու-
կասեան և Ե. Սեղբոսեան:

Ի դիմաց Ազգ. Ընդհ. ժողովոյ
Ատենապետ Ատենադպիր
Ա. Թաթարեան Գ. Բիւրտեան

ՆԱԽԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

- Յունվար 13ին հասնող նաւեր.
- Բրիտանիա Հալիքէն,
- Փէնսիլվանիա Համպուրկէն,
- Ռէքթիստամ Ամսդէրտամէն,
- Լահն Պրէմէնէն.
- Յունվար 14,
- Պրիտանիա Լիվերփուլէն,
- Յունվար 15
- Սէնդ Փոլ Սալդհամգընէն,
- Յունվար 16,
- Նորմանտիա Հալիքէն,
- Պրէլո Հուլէ
- Օկուսթ Վիքթորիա Ճիպրալտարէ



ՇԱՐԲԱՌԵՐԹ ԱԶԳՍՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՅԵԱԼ ՆԱԶԱՆԳԱՑ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ

ԲԱՆՏԱՑՅԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	ՏՂ. ՍԺ. 50	Տարեկան	10 ֆրանք.
Վեցամսեայ	75	Քաժանորդագրին ԿԱՆՈՒԿ	
Յուսմանայ	40	Վճարելի է միշտ:	

Մտար կամ նամակ ուղղել Հետեւեալ Հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second Class Mail Matter.

ՆՈՒ ԵՈՐԲ, ՇԱՐԲԱՌ, ՅՈՒՆՎԱՐ 15 1898.

ՀԱՅՈՑ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Գաղթականութիւնն նոր բան մը է մեր ազգին համար. գարեթի ի վեր անբուժելի վէրք մը գարծած է այս մեր ազգային կեանքի մէջ: Եթէ չենք սխալիր, Ծրք դարձն է կ'սկսին Հայ գաղթականութիւնը մտահոգութիւն պատճառել Ազգին(*):

Ուրիշ ազգեր գաղթականութեանց միջոցաւ իրենց լեզուն ու երկիրը կը նորոգեն այսօր՝ երկրագնդին ամեն կողմն փտուց ու վաճառականութեան նորանոր աղբիւրներ հաստատելով. բայց մեր մէջ—այսինքն է թէ ինչու— գաղթականութիւնն աւելի և աւելի աղէտներ կը ներթէ՝ արդէն տկարացած բազմաշարժար ազգութեան:

Վերջի առաջին կոտորածներն, ազգային տեսակէտէ դիտելով՝ այնչափ մեծ աղէտներ չի գործեցին, որչափ կը գործեն գաղթականութիւնը՝ առանց աշխարհի ուշադրութիւնն հրահրելու: Առաջինը իր աւերից հետ միասին բնաւ նաև մի բարոյական դաս, Հայ սրտին մէջ սեղծեց յաւիտենական անհաշտ ատելութիւն մ'ու վրէժխնդրութիւն թշնամիին դէմ՝ բայց վերջինն կոչուած ունի լոկ յիշատակ մը թողուլ ապագային՝ ողբալու համար:

Գաղթականութեան մը կեանքը երկար չի կրնար ըլլալ. ծովը վազող գետի մը ջուրերը յաւիտենա չեն կրնար իրենց համը պահել: Ամերիկայի այս անյատակ ու վիճակն վազող մեր ազգային հոսանքը նմանապէս երթակայ է այն բազմիւն որուն վիճակեցանք մեր Լեհաստանի, Հնդկաստանի, Իրան-սիւլիանիոյ և այլ բազմաթիւ գաղթականք: Հոս համբուժած են մեր օրեր՝ ազգային տեսակէտով: Բայց սակայն մեր այս կարծ օրերն կրնան իրենց օգուտն ունենալ: Եթէ աշխատինք ազգութեան ոգին անվթար պահել. եկող հոսանքը կեցնել ու գաղթականութիւնն հետզհետէ Հայրենիք վերադարձնելու ջանքեր ընել, երբ պատէճ առիթը ներկայանայ, մեր ազգային մահը իր արդիւնքն ունեցած կ'ըլլայ: Եկեղեցիք, ընկերութիւն, թանգարան և այլն ամեն ազգային հաստատութիւնք թէև ըստ երևոյթի տարբեր, բայց իրապէս այս ընդհանուր նպատակին կը ծառայեն: Հայը Հայաստանի համար սակզուած է:

Վերջի տարին եթէ ընդհանուր կերպիւ ուրախալի բան մը չունէր իր մէջ Ամերիկայի գաղթականութեան համար, բայց դէպի այս ընդհանուր նպատակն իր ըրած ձեռնարկներ կարելի չէ ուշադրութեան վերաբեր: Ասանք գովեստի արժանի փոքր պարագաներ են, թէև ազգային ու աննշան կաթիլներ. բայց ծով մը կազմելու համար անոնց գոյութեան պէտք կայ անհրաժեշտ:

Ուրախալի է արձանագրել որ վերջի տարին Ամերիկայի գրեթէ բոլոր Հայաբնակ քաղաքներու մէջ ազգային ընկերութիւններ կազմուեցան. վարդապետներ, քահանաներ ու քարոզիչներ աւելցան. Հայ մամուլն նոր կեանք ու ոգի առաւ, ազգային գործոց վարկ մը տալու համար: Ասանք գովելի քայլեր են մեր ազգային ճամբորդութեան երկայն ուղիին վրայ:

Չենք կրնար չի խոստովանիլ սակայն թէ մեր ազգային ու կրօնական սյս գործոց մէջ կ'ընկնեն անպակաս են միշտ: Բայց գիտնալու է թէ կ'ուր ընկն թէև անխորժ ու վնասակար, բայց այսու հանդերձ կեանքի նշան մ'է ինքնին: Կուող մարդէն բան մը կարելի է յուսալ, իսկ մեռեալէն՝ ոչինչ:

(*): Թովմա Արծրունի ծանօթ պատմաբանն, որ ծագկեցաւ Ծրք դարու մէջ, կ'ըսէ թէ «Տէր Բրիտանիոյ Հայոց Կաթողիկոս գրէ առ կողմանս Ասորեստանի և Սոստանի (Հայոց), զգուշացուցանելով մի խառնիլ ընդ Նեստորականս ևն.» Տէր Բրիտանիոյ մեր 15րդ Կաթողիկոսն է, որ դահ բարձրացաւ 475 թուին:

Այս պարագաներն անխնայ ապացոյցներ են սա ճշմարտութեան թէ յոյսը, որով պարծեմ ենք դարերէ ի վեր, մեռած չէ մեր մէջ, որպէս կը կարծեն մարդիկ: Մեր ազգային կեանքը հորիզոնն որչափ ալ մութ ու ամպոտ, բայց յուսոյ աստղը մարած չէ երբէք. ամպերու ետև ծածկուած է այն՝ օր մը նորէն ծագելու համար: Թէ երբ կուգայ այդ բարեբաւոյն օրն, ոչ ոք կրնայ մարգարէանալ, սակայն կարելի չէ ըսել թէ Եւրոպական նոր պատերազմէ մը վերջ աշխարհացոյց քարտէզն քանի քանի փոփոխութեանց կ'ենթարկի. և թէ ո՞վ կը լինի տէրն ու տիրողն այն երկրին, ուր մարդկութեան խանձարուրը բացուեցաւ Հայոց որորանին մէջ:

Յոյսը կեանքի անբաժան ընկերն է: Ժամանակը հրաշքներ կը գործէ անոնց համար որոնք կապրին: Մենք աշխարհի հետ ծնանք. մեզմէ վերջ ազգեր եկան, ու ազգեր զնացին, բայց Հայը կ'ապրի տակաւին, և ո՞վ կրնայ կարծել թէ այս դարեր ժողովուրդն օր մը ձեռք չի ձգեր նորէն իր իրաւունքներ, որպէս ըբաւ քանիցս ստեղծագործութեան ի վեր: Դարերը, Հայ ազգի կեանքին մէջ մանաւանդ, չունին մեծ նշանակութիւն . . . :

Այս անկասկած յոյսն է որ կապրեցնէ Հայը աշխարհի վրայ: Այս է պատճառն որ մեր գրող ու խորհող դասակարգը ամէն բանէ աւելի ջանացած է Հայ լեզուն ու ազգութիւնն անվթար պահել: Մի և նոյն յոյսն է որ կը խօսէր վերջերս Վեհ. Հայրիկի Կոնդակին մէջ, որով նորին Վեհափառութիւնն կը զգուշացնէր զմեզ Հայ գաղթականներս «առաջի առնելով զամենայն զինասարք և զկորստաբեր հետեանս որք յառաջ գան յօտարամտութեանէ, յուսադրելով թէ Տէր Աստուած այցելութեամբ այց արասցէ Հայաստան աշխարհի և ժողովրդեան»:

Շատ պատճառներ ունին որ սղբալու, բայց պատճառ մը չ'կայ յուսահատելու համար. յուսահատելը մահ է. երբ կապրինք, կը յուսանք նմանապէս. մնացեալը ապագայի դարձն է:

Հայաստան ամոյսացած է արդարև, ժողովուրդը ցիր ու ցան ընդ ոլորտս աշխարհի: Հայկական ծառին ճիւղերն ջարդի ի բուրդ ինկած են ամէն կողմ: Գաղթականութիւնները կորստեան վտանգին ենթարկուած կը մնան, բայց այսու հանդերձ Հայկական ծառին բունն ու զօրաւոր արմատը՝ որ զիմացեր է դարերու ու ժամանակի աւերմանց, կայ և կը մնայ անզգորդ: Գոյութիւնը կեանք է: Յոյսը կեանքի մէջ է:

ԲԱՂԱՌԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Աթէնայէն առնուած լուրերուն համեմատ «Եթնիք Էթնէ-րիաի» դատաստանը սկսած է, որով պիտ իպարզուի թէ այս ընկերութիւնն ինչ դեր խաղացեր է վերջի պատերազմին մէջ: Ամբաստանալ պաշտօնեաներն կըսուի թէ այնչափ շատ են որ դատող զինուորական աստանն կազմելու համար իւրաքանչիւր աստիճանէ պէտք եղածին չափ զինուորական դատաստաններ գտնելը անհնարին պիտ ըլլայ:

ՅրանքՓորթը Զայթունկի Կ. Պոլսոյ թղթակիցը կը գըրէ թէ Սուլթանը գաղտնի իրատէ մը հանրէ է այս օրեր, որով յայտարարելէ վերջ թէ Սուլթանը կ'այսրէր քաղաքակառուցութեան վրայ մեծ վտանգութիւն ունի, և կը խրատէ իր բարձրաստիճան պաշտօնեաներն զգուշանալ այնպիսի քաղաքական դարձածքներէ որք, տեղի կ'ունենան Թուրքիոյ մէջ՝ այս երկու բարեկամ կառավարութեանց սերտ բարեկամութիւնն իսկելու համար:

Հեռագրերը կը ծանուցանէ Պոլսէն թէ Հայ Յեղափոխականներ սպառնացած են Ռուսական զենայանաւորուն ուժանակով օղբ հանել, և թէ Հայաստանի մէջ գործադրուելիք բարենորոգմանց Մարզիկի դէմ Ռուսիայ շարունակէ հակառակութիւն յարուցանել: Թէ ո՞ր աստիճանի իրաւ է այս լուր, չենք գիտեր: Արդեօք Օսմանեան պանքայի խնդիրն մտադարձնէ: Յիշատի երբեք Ռուսիան Եւրոպական Տէրութիւններն արթնցնելու ենք, սակայն զանաք արթնցնելու համար խնդ Հայ ազգի արեան հետ չի խաղանք:

Ռուսիայ Ռուսոմոսկան գործոց նախարարին մահը ցաւօք կ'արձանագրենք: Մ. Դեկտեմբեր, գիտեն անշուշտ ընթերցողք թէ Հայ մ'է, և մեր ազգին պարծանք ազգային մը, որ երկու տարիներէ ի վեր վարած է Ռուսական Կայսրութեան ամենաբարձր պաշտօններէ մին:

Կրէտէի մասին հասարակաց կարծիքը շատ յուզուած է: Ամէն կողմէ կը հարցուի թէ ինչպէ՞ս կ'ըլլայ որ փոքրիկ կղզւոյ մը խնդիրն երկու տարուան մէջ չի լինար: Վիեննայի Տէօչէ Զայդունկի լրագրերը կը գրէ որ այս խնդիրը եթէ Կրէտացիներու ձեռքը մնար, շատոնց կարգադրուած պիտ ըլլար: Իսկ Գէօլիքի Զայդունկի աւելի յառաջ կ'ըսէր ի վրէժն որ «Եւրոպա միջամտեց կրէտէի խնդրոյն յանուն մարդկութեան, բայց մի քանի Տէրութեանց շահախնդրութեամբ, միջամտութեան արդիւնքը սամարութեան փոխուեցաւ»: Թէև Կ. Պոլսոյ Դեսպաններն համաձայնած էին՝ առ ժամանակեայ կերպով Մօզէնէկրօի իշխաններէն մին, Պ. Փէրօվիչ, կառավարիչ անուանել կրտէէի համար, բայց չի կրցին յաջողել, որովհետև նիքոչա իշխանը չուզեց Մօզէնէկրօի բանակը զրկել իր յաջող հրամանատարներէ մէկէն, այս փափակ պարագային մէջ, երբ Պալքաններէն խոզովութիւններ Կ'ակնկալուի:

ԱՄԱՆՈՐ

Ինչ զուարթ է Սմանորը. ամէն տարի այս օրին, ժպիտը երեսին, ապագայի հմայիչ խոստումներով բեռնաորուած՝ կը ներկայանայ մեր մտքի առջև. խնդութիւնը ընդհանուր է. վայրկեան մը հաւասարութիւնը կառավարիչ կը դառնայ բանաւոր աշխարհին, որու անդամները անխոր յոյն զգացմամբ լեցուած փոխադարձ «նոր և բարի տարի» կը ցանկան: Բոլորս ալ միայն մէկ բուռն փափաք ունինք այժմ. այն է ազատիլ Հին տարւոյ աղէտաւոր յիշատակներէն և թեւակոխել նորին մէջ՝ ամեն հոգերէ անկախ, ամանորի դիւթանքներով արեցած՝ կը մոռնանք անցեալի պատմութիւնը և արհամարհոտ զգացմամբ կռնակ կը դարձնենք Հնոյն, և ինչո՞ւ արդեօք, միթէ այն ևս նոյն ոգևորութեամբ չընդգրկեցինք. . . : Գանի մը բոպէ ևս և ահա տարբերութիւնը նորէն կը տիրապետէ աշխարհին վրայ:

Տարի մը պատմութեան ականատես, բարւոյ և չարի մեքենայութեանց ենթարկուած, անհատուժ փորձանքներ ու տառապանքներ կրած՝ այսօր կարճ հանգիստ մ'առնելով նոր Տարին սկսելու կ'աճապարենք. սակայն անպարտաւոր պէտք չկայ. բոլորս ալ վիճակուած է այդ, բայց խնդիրը սկզբնաւորութեան ձևին մէջ է, որով մարդիկ իրարմէ կը տարբերին. հանգստի այս կարճ միջոցը ալ կերպով կը գործածուի տարբեր անձանց և տարբեր հասարակութեանց կողմէն, ուստի և տարբեր արդիւնք կը քաղեն տարւոյն վերջանալուն:

Հաւարակութեան մի մասը ժամանակի անվերջ հոսանքին անտուժ՝ անխորթօրէն կը շտայէ իւր կենաց անդ առնալի ընթացքը և կը ժողովայնէ անոր վախճանը անօգուտ ու վնասակար հետեանքներով: Նա ամանորի արտաքինէն միշտ խաբուելով՝ նորա ներկայութեամբ միայն գոհացած՝ անկարգ ու անպայման անձնատուր կը լինի ժամանակի նոր հոսանքին. իսկ յետոյ . . . այդ բոպէն իսկ կ'սկսի կրկնելի պատմութիւն մը, նկարագրութիւն մը մին միւսին յարողով թըռուտութեանց և անոնց իբր արդիւնք սղոյ անզիզ հոսաչանքներ: Ու մենք այս հասարակութեան մի ստուար մասը կը կազմենք. այլ սակայն թուի թէ մազի մ'իսկ հաւասար բաժին չունինք անյուսութեան առաջնորդող վերջնալ պատմութեան մէջ՝ անտարբեր սրտով. անով միայն կը բաւականանանք որ ուրիշներուն հետ մենք ալ նոր Տարին սկսելու բազմաորութիւնն ունինք:

Եթէ կը խոստովանինք թէ մարդս մնացեալ արարածներէն բարձր դիրք մ'ունի իւր բանականութեամբ, եթէ կ'ընդունինք թէ մարդս օտուտած է կէս-Աստուածային ձիրքերով, և կրնայ մաքաւել ընդ գէժ մ'ամենարուտն տալականաց իւր խնայի կարգադրութիւններով. ապա ուրեմն նա պարտի նախապէս իւր դիրքին արժանի կենցաղ մը ծրագրել՝ կառավարելու համար իւր անհաստական կեանքը, որ առաջին կարեւոր աստիճանը կը կազմէ ընկերական բարեք կազմակերպութեան: Նա իւր գործունէութեան ընթացքին մէջ երբեմն պէտք է կանգ առնէ և ինք իրմէն հաշիւ պահանջէ անյեղալ համար, և արդեօք Սմանորըն այդ հանգստավայրերէն ամենազեղեցիկ և խորհրդաւոր սահմանումն չէ՞:

Իւր վիճակին գիտակից, սկզբանց տէր անձն և կամ հասարակութիւնը ջատագովութեանց արժանի կարգ ու կանոնով կը վերջացնէ իւր հաշիւը Հընոյն հետ ու այնպէս կ'ընդգրկէ նո-

